

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐԻ, ԼԵՌՆԱԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՍԱՀՈՒՂԻՆԵՐԻ, ՍԱՌՑԱԴԱՇՏԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետությունում կա 34 մարզադաշտ՝ հիմնականում ֆուտբոլային: Երեք մարզադաշտ՝ Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտը, «Հրազդան» մարզադաշտը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոնի մարզադաշտը (նախկին «Միկա» ֆուտբոլային ակումբի մարզադաշտը), համապատասխանում են միջազգային չափանիշներին և մարզադաշտերի վիճակը պարբերաբար բարելավվում է: Մասնավորապես, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոնի մարզադաշտի վիճակի բարելավման նպատակով 2016 թվականի առաջին կիսամյակում կատարվել են մոտ մեկ միլիոն դրամի հողային և խոտի սերմնացանի աշխատանքներ:

Լեռնադահուկային սահուղիները գործում են Ծաղկաձոր և Ջերմուկ քաղաքներում: Ծաղկաձորի ճոպանուղուն կից գործում է 5 սահուղի, որոնցից 2-ն ունեն միջազգային գրանցում, իսկ 3-ը սիրողական են: Ծաղկաձորում գործող բոլոր սահուղիների ընդհանուր երկարությունը կազմում է 33400 մ: Ջերմուկում գործում է 2 սահուղի, որոնք առայժմ չունեն միջազգային գրանցում, սակայն դրանց վիճակը տարեցտարի բարելավվում է: Ջերմուկում գործող սահուղիների ընդհանուր երկարությունը կազմում է 2820 մ: 2016 թվականի առաջին կիսամյակում կատարվել են Ծաղկաձորի և Ջերմուկի սահուղիների խոտերից և թափվող քարերից մաքրման աշխատանքներ, աշխատողների ուժերով, առանց լրացուցիչ ֆինանսական ներդրումների:

Սահադաշտերը հանրապետությունում 3-ն են, որոնք գործում են Իրինա Ռոդինայի անվան մարզադպրոցում, Կարեն Դեմիրճյանի անվան մարզամշակութային համալիրում և Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի հարակից տարածքում: Վերջին 2 սահադաշտերը սիրողական են և սեզոնային, որոնց վիճակը յուրաքանչյուր տարի բարելավվում է: